ԳՐԱԿԱՆ

ԽՕՍՔ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Գիշերուայ այս խոհուն մենութեան մէջ, երբ մեր շորս կողմում դաւն է յօրանջում, եւ հորիզոնի վրայ սեւ ամպեր են կուտակւում,- ես հայ քաջերի համար խոնարհ պաշտամունքի խօսք ունեմ...

Հա՛յ քաջեր, հայրենիքի սահմանները անառիկ պահող հին ու նո՛ր զինուորներ, իմ երախտագիտութեան խօսքն եմ յղում ձեզ գիշերուայ այս անսահման խաւարում։ Ուղեղիս մէջ խոնուած են ձեր կատարած, կատարուող եւ կատարուելիք բոլոր քաջագործութիւնները։ Զարմանում, հպարտանում եմ ձեր հոգու արիութեամբ, ձեր մարմնաւորուած հերոսութեամբ, ձեր կեանքը հայրենիքին անմնացորդ նուիրելու հաստատակամութեամբ։ Ինչքա՜ն յոյզ, ջերմութիւն, զգացմունքների յորդում կայ հոգուս մէջ։ Ձեզանից իւրաքանչիւրն ուսուցիչ է մեզ համար՝ մեծ ուսուցիչ, որն իր գործով է մեզ ուսուցանում հայրենասիրութեան ակնառու դասը, առանց որի չկայ ազգ ու հայրենիք։ Մենք ուշի ուշով հետեւում եւ սերտում ենք ձեր անձնուիրութեան դասերը։

Զինուոր լինելը հեշտ բան չէ. բանակն իր օրէնքներն ունի, եւ մարտական բարձր պատրաստականութիւնն էլ հեշտ չի տրւում։ Գուցէ հէնց այդ պատճառով է, որ ասում են, թէ բանակը երիտասարդին տղամարդ է դարձնում։ Մեզ սովորեցրել են, որ զինուորը պէտք է կարգապահ լինի, ֆիզիքապէս կոփուած, ամուր, մարտունակ եւ խելացի։ Զինուորը պէտք է մեծ կամք ունենայ՝ դիմագրաւելու վերահաս փորձութիւնները։

Մեր արիասիրտ քաջերը զինուորներն են այն բանակի, որի երակներում Վարդանանց արիւնն է հոսում։ Եւ ոչ միայն Վարդանանց... Բոլոր ժամանակներում հայ ժողովրդի լաւագոյն զաւակները բանակն իրենց մէջ ամբարել ու պատրաստ են եղել կենաց-մահու պայքար մղել՝ յանուն հող-հայրենին անաղարտ պահելու։

Ասում են՝ ամէն սերունդ իր պատերազմն ունի։ Մեր հայրերին Արցախեան պատերազմը բաժին ընկաւ, եւ ճակատագրի կամօք այնպէս եղաւ, որ հայոց ազատաբեր բանակը մեզ համար դարձաւ արցունքոտուելու չափ մօտ ու հարազատ։

Վերջին՝ 44-օրեայ պատերազմն աղետալի եղաւ։ Տասնութ-քսան տարեկան հայ օճախի ճրագ զինուորները մինչեւ արեան վերջին կաթիլը պայքարեցին, որ անսասան պահեն հայոց սահմանները։ Նրանցից եւ ոչ մէկի մտքով չէր անցնում նահանջել, փախուստի դիմել, սեփական կաշին փրկել, որովհետեւ այդ տասնութ-քսան տարեկան պարմանիները գիտակցում էին, որ պատասխան ունեն տալու իրենց նախնիներին, հայրենիքն իրենց վստահած ժողովրդին եւ գալիք սերնդին։ Մահուան աչքերին նայելով, սպանուած եղբայրների դեռ չսառած արիւնը տեսնելով, վախից քարացած, ցաւից տնքացող որդեկորոյս մայրերի, չհարսնացած աղջիկների ու այրիացած կանանց տեսնելով էլ աւելի էր կարծրանում նրանց կամքը, ձեռքերն աւելի ամուր էին բռունցքւում, եւ սրտերն այրւում էին վրէժի հրով։

Հայրենասիրութիւնն սկսւում է այնտեղից, որտեղ վերջանում է անձնասիրութիւնը։ Արցախեան գոյամարտի այդ ահաւոր օրերին բոլորս բռունցքուած հետեւում էինք մեր զինուորների կատարած սխրանքներին, որոնց արեամբ սրբացւում էր հայոց հողը գրեթէ ամէն վայրկեան։

Յիշում եմ, մեր դպրոցի բակում կար մի խաչքար՝ աղբիւր-յուշարձան էր, որ նըւիրուած էր զոհուածների յիշատակին։ Մենք արիութեան դասեր եւ համերաշխութեան միտինգներ էինք անցկացնում այնտեղ եւ ծաղիկներ էինք դնում յուշաքարին։ Հիմնել էինք հերոսների յիշատակի ծառուղի, այցելում էինք նաեւ Եռաբլուր, սակայն ինձ համար նրանց յիշատակը յաւերժացնող ո՛չ աղբիւր-յուշարձանը, ո՛չ հերոսների յիշատակի ծառուղին եւ ո՛չ էլ Եռաբլուրը չէին նոյնանում բանակի խորհրդանիշի հետ։ Թերեւս պատճառն այն էր, որ մենք չէինք ուզում հայոց բանակի զինուորներին յուշաքարերի ու մահարձանների վրայ որոնել։

Յաւե՛րժ փառք զոհուածներին, խունկ եւ աղօթք նրանց անմար յիշատակին։

Այսօր մեր ազատութիւնը, անկախութիւնն ու հզօրութիւնը մեր՝ ողջերիս, այսօրւայ եւ վաղուայ զինուորների՝ Հայկի, Արամի ու Տիգրանի յետնորդների ձեռքում է։ Որքան էլ հորիզոնի վրայ սեւ ամպեր կուտակուեն, դաւը յօրանջի, մէկ է թշնամին միլիոներորդ անգամ կը հասկանայ ու կը համոզուի, որ այն ազգը, որ մեռնել չի ուզում, չի կարող սպանել նրան։

Յաւօք, մեր ազգը ծնել է նաեւ տմարդի ու դաւաճան զաւակներ, ովքեր խարդաւանքով ու քծնանքով փորձել են եւ այսօր էլ փորձում են կոտրել հայ ազգի մէջքը։ Վստահ եմ քո ճանապարհին եւս հանդիպել ես նրանց։ Զգո՛յշ եղիր, բայց եւ պատրա՛ստ՝ դիմագրաւելու կեղծ ու շողոմ խօսքերին, պատիր խոստումներին, մեղկ հրայրքների լարած որոգայթներին։ Մի պահ ե՛ւ նայիր մեր ժողովրդի անցած ուղուն. մենք շատ ենք մնացել անտէր ու անթագ եւ դողդղացել ենք՝ հողմերին գերի...

Թող վասակները դիւանագիտութիւն խաղան, թող ճշմարիտ ու սուտ քաղաքական ելքեր հնարեն, մեր իմացած ելքը մէկն է՝ չտալ հայրենիքը թշնամուն, չթողնել, որ նրա շունչն արատաւորի մեր սուրբ հողը...

Փոքրոգինե՛ր, արեան ծարա՛ւ հրձիգներ, Հայաստանն ու հայը պատուով ու փառահեղ պատմութեամբ յարատեւել են, եւ յաւերժ է նրանց ճանապարհը։ Այդ ճանապարհին գտնուող խոչընդոտները վերացնելով՝ նրանք դարձեալ հասնելու են դարերի փառքին։

Ասում են՝ մարդն իր կեանքում միայն երեք անգամ պիտի երդուի.

- անմնացորդ ծառայել հայրենիքին, շէնացնել հայրենի երկիրը,

- ամուր պահել սեփական ընտանիքը,

- սիրել ծնողներին եւ հնազանդուել նրանց կամքին։

Եւ եթէ վերջին երկու երդումը մարդ շշնջում է միայն իրեն լսելի ձայնով, շշնջում է աղօթքի նման, ապա առաջինը կարող է բարձրաձայնել ի լուր աշխարհի եւ յետոյ ողջ կեանքն ապրել այդ երդմանը հաւատարիմ։

Ոչ մի ազգ ուրիշների թողտուութեամբ չի յարատեւում։ Մեր փրկութիւնը մենք ենք նուաճելու։ Եւ աշխարհը՝ քաղաքակիրթ, ապահով, բարեշէն եւ իմաստուն աշխարհը դեռ բազում անգամ դառնութեամբ կուլ պիտի տայ նախանձի թուքը, երբ լսի հայ մտքի ու հայ բազկի սխրանքների մասին։ Մենք նոր խօսք ունենք աշխարհին ասելու, իսկ դրա համար դեռ պէտք է ապրել ու հզօրանալ։ Մեր բանակը եւ Աստուած մեզ ապաւէն։

ՍԻՈՆ ԱԲԵՂԱՅ ԹԱՔՈՒՇԵԱՆ